

# ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

1954 թվականի դեկտեմբերի 14—19-ը՝ դռնբաց դատական նիստում Լենինգրադ քաղաքում ՍՍՌՄ Գերագույն դատարանի Ռազմական կոլեգիան, որի կազմի մեջ մտնում էին նախագահող՝ ՍՍՌՄ Գերագույն դատարանի նախագահի առաջին տեղակալ արգարադատության գեներալ-լեյտենանտ Ե. Լ. Չելդիխը և դատարանի անգամներ՝ արգարադատության գեներալ-մայոր Վ. Վ. Սյուլդիխը և արգարադատության գնդապետ Վ. Վ. Բորիսոզլերսկին, մասնակցություն բերող մեղադրող՝ ՍՍՌՄ Գլխավոր դատախազը, արգարադատության իսկական պետական խորհրդական Ռ. Ա. Ռուդենկոյի և պաշտպանության՝ փաստաբանների Մոսկվայի քաղաքային կոլեգիայի անդամներ Լ. Ի. Գրինյովի, Մ. Վ. Ստեպանովի, Ն. Ի. Ռոզովի, Լ. Վ. Պավլովի քննարկեց ՍՍՌՄ պետական անվտանգության նախկին մինիստր Վ. Ս. Աբակումովի, ՍՍՌՄ Պետական անվտանգության մինիստրության հատուկ կարևոր գործերի գծով քննչական մասի նախկին պետ Ա. Գ. Լեոնովի, հատուկ կարևոր գործերի գծով քննչական մասի պետի նախկին տեղակալներ Վ. Ի. Կոմարովի և Մ. Տ. Լիխաչևի, ՍՍՌՄ Պետական անվտանգության մինիստրության նախկին աշխատակիցներ Ի. Ա. Չերնովի, Յա. Մ. Բրովերմանի քրեական գործն ըստ մեղադրանքի ՌՄՖՍՌ Քրեական օրենսգրքի 58—1—աբ, 58—7, 58—8, 58—11 հոդվածներով նախատեսված հանցագործություններում:

Դատական քննությունը լիովին հաստատեց նախնական քննության նյութերը և մեղադրյալներին ներկայացված մեղադրանքները:

Մեղադրյալ Աբակումովը, Բերիայի կողմից առաջ քաշվելով ՍՍՌՄ պետական անվտանգության մինիստրի պատումը, հանդիսացել է հանցավոր գավազրակախ խմբի ուղղակի գործակիցը, կատարել է Բերիայի թշնամական առաջադրանքները՝ ուղղված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության դեմ:

Կատարելով նույնպիսի հանցագործություններ, ինչպես և Բերիան, Աբակումովը կանգնել է ավանտյուրաների ու քաղաքական պրովոկացիաների ուղու վրա: Աբակումովը գործեր է հորինել պարտիական, սովետական ապա-

րառի առանձին աշխատողների և սովետական ինտելիգենցիայի ներկայացուցիչների նկատմամբ, ապա ձերբակալել է այդ անձանց և, կիրառելով սովետական օրենքով արգելված՝ բռնություններ հանցավոր մեթոդներ, իր գործակիցներ Լեոնովի, Կոմարովի, Լիխաչևի հետ միասին ձգտել է ձերբակալվածներից կորզել հնարովի ցուցմունքներ՝ պետական ծանր հանցագործություններում մեղքի խոստովանություններ:

Այդպիսով Աբակումովը կեղծել է աշխատանք կողմից «լեոնինգրադյան գործը», որի համաձայն շփոթեցված կերպով ձերբակալվել են մի շարք պարտիական և սովետական աշխատողներ, որոնք կեղծ կերպով մեղադրվել են պետական ամենածանր հանցագործությունների մեջ:

Դատական քննությամբ հաստատվել են նաև Աբակումովի ու նրա գործակիցների կողմից քրեական գործերի կեղծման և սոցիալիստական օրինականության հանցավոր ոտնահարման ուրիշ շատ փաստեր:

Աբակումովի և նրա գործակիցների կողմից կեղծ կերպով մեղադրված անձինք ներկայումս լիովին ռեաբիլիտացիայի են ենթարկված:

Իր կատարած հանցագործությունները թուքցնելու համար Աբակումովը արգելել է ըստ պատկանելության ուղարկել ձերբակալվածների դիմումներն ու զանգատները, որոնք հասցեագրված են եղել ՍՄԿՊ Կենտկոմին և Սովետական կառավարությանը:

ՍՍՌՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիան, լիովին ապացուցված գտնելով Աբակումովին ու նրա գործակիցներին ներկայացված մեղադրանքները, դատապարտեց՝ մեղադրյալ Ի. Ա. Չերնովին բանտարկելու ուղղիչ-աշխատանքային ճամբարում 15 տարի ժամկետով. մեղադրյալ Յա. Մ. Բրովերմանին բանտարկելու ուղղիչ-աշխատանքային ճամբարում 25 տարի ժամկետով. մեղադրյալներ Վ. Ս. Աբակումովին, Ա. Գ. Լեոնովին, Վ. Ի. Կոմարովին և Մ. Տ. Լիխաչևին ենթարկել քրեական պատժի բարձրագույն շափին՝ գնդակահարություն: Ներկա գտնվողները դատավճիռը դիմավորեցին մեծ գոհունակությամբ: Դատավճիռը ի կատար է ածված: